ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 49-Լ

«07» 06 2023 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության (այսուհետ՝ նաև Վարչություն) պետ Արսեն Ռուբիկի Մարտիրոսյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և Վարչության պետի պարտականությունների կատարումը Վարչության պետի տեղակալ Էգդար Արսենի Արսենյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2023 թվականի հունիսի 5-ի՝ համապատասխանաբար N 231-Ա և N 215-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել Վարչության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Ա.Մարտիրոսյանի կողմից՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Է.Արսենյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Ավագյան Եղիազար - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Հանձնախմբի անդամներ՝

Սերոբյան Կորյուն -	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ,
Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Մանուկյան Լիաննա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետ,
Խաչատրյան Նունե -	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությանն աջակցող բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2023 թվականի հունիսի 26-ը:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ